Վերլուծություն

2022-2023 ուստարում իրականացված կարճաժամկետ դասընթացների գնահատման արդյունքների

2022 թվականին Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում իրականացվել են հետևյալ կարճաժամկետ ծրագրերը.

- Լուսանկարչություն
- Հրուշակեղենի պատրաստման հմտությունների և կարողությունների զարգացում
- Ռուսաց լեզու (հեռավար)
- Կարուձևի կարողությունների և հմտությունների զարգացում
- Վարսավիրական գործի հմտությունների և կարողությունների տիրապետում
- Ռեստորանային ծառայության կազմակերպում և մատուցում
- Դասընթացների ավարտին իրականացվել է ծրագրերի գնահատում շահառուների կողմից (բացառությամբ «Ռեստորանային ծառայության կազմակերպում և մատուցում» դասընթացի): Գնահատումն իրականացնելու նպատակն է ստուգել դասընթացի կազմակերպման արդյունավետությունն ու մշակել բարելավման մեխանիզմներ:

Գնահատումն իրականացվել է անանուն, միավորային եղանակով (5 բալանոց սանդղակ):

Գնահատվել են դասընթացի բովանդակությունը, տևողությունը, տրամադրված նյութերն ու գործիքները, գրականությունը, դասընթացավարի մոտեցումը, հմտությունները, ընտրված մեթոդները և դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին:

Դասընթացի բովանդակությունը, տրամադրված գրականությունը, նյութերն ու գործիքները, դասընթացավարի հմտությունները, մոտեցումները, ընտրված մեթոդները, դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին բոլոր շահառուները գնահատել են գերազանց (5): Բացառություն են կազմում Կարուձևի կարողությունների և հմտությունների զարգացման դասընթացի 3 շահառուներ, որոնցից 2-ը տրամադրված նյութերն ու գործիքները գնահատել են 4, 1-ը, 1 շահառու դասընթացի բովանդակությունը գնահատել է 3 միավոր: Նույն դասընթացի 1 շահառու էլ 3 միավոր է գնահատել դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին:

Հրուշակեղենի պատրաստման հմտությունների և կարողությունների զարգացման դասընթացի 1 շահառու դասընթացից ունեցած ակնկալիքների համապատասխանությունը դասընթացի արդյունքներին գնահատել է 4:

Ինչ վերաբերում է դասընթացի տևողությանը, գրեթե բոլոր շահառուներն այն գնահատել են 4:

Առաջարկություններ բաժնում կատարված գրառումներից պարզ է դառնում, որ շահառուները նախընտրում են դասընթացին հատկացված ավելի երկար ժամանակահատված: Լուսանկարչության դասընթացի 1 շահառու կարևոր է համարում բնության մեջ իրականացվող լուսանկարումների ներառումը դասընթացի բովանդակության մեջ:

Կարուձևի կարողությունների և հմտությունների զարգացման դասընթացի 1 շահառու առաջարկում է ուսումնառողներին թողնել կարված հագուստներից մի քանիսը:

Իրականացված գնահատման ձևաչափը ընդհանուր առմամբ բավարար է, սակայն հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ շահառուները խուսափում են երկար գրառումներ կատարել :

Առաջարկվում է հետագա ծրագրերի կազմման համար ուշադրություն դարձնել դասընթացի ժամանակային հատկացմանը և ի գիտություն ընդունել շահառուներին որևէ հուշ սեփական աշխատանքներից թողնելու ցանկությունը, ինչպես նաև Լուսանկարչության դասընթացի ծրագրով նախատեսել բնության գրկում կատարվող լուսանկարումներ:

Կազմող՝ ---------- Ա. Դաբաղյան

10.04.2023թ.